ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

09.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/22

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.02.2018թ. թիվ 03/26-3/2059-18 գրությամբ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/431 գրության հիման վրա, 08.02.2018թ. թիվ 03/26-3/2059-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը լիովին համապատասխանում է հրավերի պահանջներին, քանի որ հրավերի տեխնիկական բնութագրի մեջ նշված չի եղել, որ ապրանքի չափման միավորը նախատեսվել է «տուփ»-ով, իսկ քանի որ Ընկերությունը տարիներ շարունակ նույն ապրանքը ՀՀ ՊՆ-ին մատակարարել է «հատ»-ով, ուստի այս անգամ ևս նախատեսել է նույն չափման միավորը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/431 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտ էին ներկայացրել թվով 16 մասնակիցներ, այդ թվում՝ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն:

«Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 9-րդ, 14-րդ, 41-րդ, 42-րդ, 55-րդ, 57-րդ, 58-րդ, 62-րդ և 65-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա Ընկերությունը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ

Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետը՝ հանձնաժողովը 31.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունը:

«Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից հայցված շտկմանն ի պատասխան ներկայացվել է գրություն, որը պարունակում էր մեկնաբանություններ առաջարկված տեխնիկական բնութագրի և չափման միավորի վերաբերյալ:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/22 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/22 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է նույն հրավերի համապատասխան չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագրին:

3. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագրի 9-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռք բերել «Էլեկտրոդներ տրեդմիլ և հոլտեր հետազոտությունների համար» ապրանքատեսակը, որի չափման միավորը նույն հավելվածով նախատեսված գնման ժամանակացույցով սահմանվել է «տուփ»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների, այդ թվում նաև՝ 9-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով՝ ներկայացված տեխնիկական բնութագրում 9-րդ չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի համար որպես չափման միավոր նշվել է «հատ/տուփ»:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել են անհամապատասխանություններ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում արձանագրվել է, որ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ 9-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքից պետք է մատակարարվի 1000 տուփ, իսկ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում նշված է «Փաթեթների մեջ տարբեր քանակներով հատ/տուփ» արտահայտությունը, ուստի Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները Կարգով նախատեսված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված որոշմամբ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի հայտը մերժվել է Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.02.2018թ. թիվ 03/26-3/2059-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/431 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-6-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի

միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

48.Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագրի 9-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռք բերել «Էլեկտրոդներ տրեդմիլ և հոլտեր հետազոտությունների համար» ապրանքատեսակը, որի չափման միավորը նույն հավելվածով նախատեսված գնման ժամանակացույցով սահմանվել է «տուփ»:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների, այդ թվում նաև՝ 9-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով՝ ներկայացված տեխնիկական բնութագրում 9-րդ չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի համար որպես չափման միավոր նշվել է «հատ/տուփ»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել են անհամապատասխանություններ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում արձանագրվել է, որ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ 9-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքից պետք է մատակարարվի 1000 տուփ, իսկ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում նշված է «Փաթեթների մեջ տարբեր քանակներով հատ/տուփ» արտահայտությունը, ուստի Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները Կարգով նախատեսված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 23.01.2018թ. պարզաբանմամբ Ընկերությունը հայտնել է, որ «Էլեկտրոդներ տրեդմիլ և հոլտեր հետազոտությունների համար» ապրանքատեսակը երբեք չի փաթեթավորվում առանձին տուփի մեջ մեկական և դրանք կամ պահանջվում են հատի քանակով, կամ փաթեթավորումով, եթե իհարկե

նշվում է փաթեթավորումում «Էլեկտրոդներ տրեդմիլ և հոլտեր հետազոտությունների համար» քանակը: Ընկերությունն առաջարկել է հատ/տուփ, որպեսզի պարզ լինի, որ խոսքը գնում է հատի մասին թեկուզ հրավերում սխալմամբ նշված է տուփ: Այսինքն Ընկերությունն գնային առաջարկով 1000 հատ «Էլեկտրոդներ տրեդմիլ և հոլտեր հետազոտությունների համար» ապրանքատեսակի համար առաջարկել է 39 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված որոշմամբ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի հայտը մերժվել է Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով, այն հիմնավորմամբ, որ քննարկելով Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումը, այնուամենայնիվ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագրի 9-րդ չափաբաժնով նախատեսված «Էլեկտրոդներ տրեդմիլ և հոլտեր հետազոտությունների համար» ապրանքատեսակի համար որպես չափման միավոր նույն հավելվածի գնման ժամանակացույցով սահմանվել է «տուփ», մինդեռ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի կողմից 6.1 հավելվածով նշված ապրանքի համար որպես չափման միավոր նշվել է «հատ»: Դրա հետ մեկտեղ Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է նույն հրավերի համապատասխան չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագրին, մինդեռ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին և Ընկերությանը Կարգի 47-րդ կետով նախատեսված կարգով ծանուցելուց հետո նույնպես Ընկերության կողմից չեն շտկվել տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների

վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն և մասնակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկում անհամապատասխանությունը, ապա, անկախ նշված ժամկետից հետո այդ անհամապատասխանությունը շտկելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում, նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, Խորհուրդը գտնում է, որ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.02.2018թ. թիվ 03/26-3/2059-18 գրությամբ «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00021334) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**